

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Ի Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

Գ Ի Ր Ք Վ Ա Ս Տ Ա Կ Ո Ց

Տրտունջ է բանասիրաց մերոց գնախնեացն, զի թէպէտ և կարի փութա-
ջանք գտան 'ի թարգմանել և յօրինել գիրս կրօնականս, չափաւորապէս և
պատմականս, մանաւանդ որ զսեփական ազգիս մերոյ իրաց, այլ զաշխարհօ-
րէն գիտութեանց և զարուեստից ճառել, կամ զճառեալն յեղուլ 'ի թնիկ բար-
բառ իւրեանց՝ կամ ոչ կալան պէտ անձին, կամ թէ հազիւ ճաշակս ինչ ըն-
ծայեցին, Թերեւս քան զտրտունջ մեղադրանացն՝ արդարացի է տենչ մերոցս
ուսումնասիրաց, որոց առաջի՝ արդ լեզուադիտութիւն բանայ զամենայն դրունս
մատենադարանաց, վարժարանաց և համալսարանաց՝ օտար քաղաքաց և ազ-
գաց, առատապէս մատակարարելով զվայելս մտաւորական պարենից, զորոց
փշրանս իսկ, եթէ արժան իցէ ասել, ոչ գտանեն 'ի հայրենեացն շտեմարանս
իայց մեք, թէպէտ և ոչ կամիմք իսպառ՝ ըստ սրտացաւութեան բազմահմուտ
Խորենացւոյն մերոյ, անբասիր առնել զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց,
(որ և ինքնին 'ի ներքս մատուցանէ և զչքմեղան ինչ, զպատերազմաց կռու զմի-
մեանց զկնի 'ի վերայ գալ յաշխարհիս մերում) այլ յուչ ևս առնեմք, զի ա-
ռաւելագոյն ևս. վտանգք յետ ժամանակաց Քերդողահօրս՝ 'ի վերայ եկին
Հայաստանեայցս. ոչ լոկ պատերազմունք առժամայք, այլ և համաշխարհական
յեղափոխութիւնք պետութեանց և ինքնակալութեանց, և դժնդակագոյն
խազմք մազգեզանց կրօնից, և որ զհետ նորին յԱրաբիոյ անապատէն վերե-
րեւելոյ, որ կալան զմեծ մասն Ասիոյ, և բովանդակ դարս սրով և հրով դատէր
քան գրով և օրինգք. և թէ և յետոյ ուրեմն ամոքեալ և 'ի նախանձ մտեալ
Յունականացն՝ յետ նուաճելոյ զնահանգս աշխարհաց նոցին, փարէր և զգի-
տութեամբք. - որով և մերայոցս իսկ յարդարէր ճանապարհ նոր, զխաղտա-
լուր՝ այլ զճոխահարուստ լեզու իւր՝ իբրեւ կամուրջ կարծրակուռ միաւորիչ ար-
կեալ հեւելէն և հայ դպրութեանց, - այլ հակառակութիւն հաւատոցն ոչ թու-

լանայր, և ամբօխք և յարուցմունք բռնաւոր իշխողաց, և նորոց ազգաց կամ տոհմից արեւելից դիմեցմունք յարեմուտս կոյս, ոտնակոխ առնելով գրեւթէ հանապազ զՀայաստանս աշխարհ, զբնիկսն վտարելով և նեղելով, և եկամտիցն անդանօր հաստատելով տուն և արմատ, և այս գրեթէ մօտ մինչև 'ի մերս դար, գողջիւր և յաւուրս մեր յայսոսիկ. յայտ է թէ այս ամենայն ոչ ներէին ժողովրդեան երկրին տառանելոյ ընդ սպառազէն ոտիւք՝ պարապել յանդորրասէր հնարս և հմայս գիւտից և գիտութեանց, այլ որպիսի ինչ յորդատօրեայ պարէն կենաց կարեւորն էր, և որ 'ի յաւիտենականն, այն են կրօնք. և զսա՝ զի պատուականագոյն է յաստիս իբրեւ առաջին փրկանակ՝ պինդ և անթողի կալաւ ազգս մեր, թերեւս առաւել քան զայլս նմանիս:

Բայց զի այսօրիկ ամենեցուն են ծանօթք և բազում անդամ յոչ կամս իսկ յեղեղեալք, — որպէս և յայժմուս առ 'ի մէնջ, — յիշեսցուք դարձեալ ընդ խորենացոյ, զի « գտանին և միջոցք լեալ պատերազմացն » յաշխարհիս և յազգիս Հայոց, այսինքն ժամանակք ինչ խաղաղականք, յորս 'ի դէպ էր պարապել ուսմանց և բարգաւաճել: Եւ զի օգտեցան և մերքս այսպիսեօք անդորրական միջոցք, ինքնին նախ վկայէ նոյն մեր պատմագիր, զոր առ Արտաշիսիւ Բ¹ զպէսպէս արուեստից և գիտութեանց երեւումն և տաժումն 'ի Հայս, և զոր առ իւրեն իսկ՝ 'ի սպառուած Արշակունեաց հարստութեան, յայն ինչ գիւտի հայերէն տառից. 'ի ժամանակի յորում և ինքնին պարագլուխ եկաց հայերէն դպրութեանց, իբրեւ թարգման, քերդող, վիպասան, իմաստասէր, աստուածաբան, քերական, և աշխարհագիր և երգահան: Թէպէտ և նուագունք՝ այլ եղեն և առ ժամանակօք անիշխանութեան և յետագայ հարստութեանց՝ Բագրատունեացն ասեմ և Ռուբինեանց, միջոցն երջանիկք, դրախտքն ժամանակեայք յանապատի բռնահոսան հողովման քաղաքական վրդովմանց. և հայախոհ միտք բանախոյզք՝ վառեցան 'ի խնդիր իմաստից 'ի բնիկ և յօտար աշխարհս, զոր և գլուխ աւանդեցին. թէպէտ և ըստ վերոյ գրեալ պատճառաց՝ սակաւք յայնպիսեաց երկասիրութեանց քան թէ յովք՝ ժամանեցին առ մեզ, կամ ծանօթացան, Բագրատ ինչ արդարեւ արկածք և դիպումք, և նախանձ և մոլութիւն՝ զինու և հրով և ջրով ծախեցին 'ի հայերէն գրենոյ. յորոց՝ սրբազան մատենիք՝ զի բազմաթիւ յոյժ էին, առաւելագոյն և ճողպարեցան. սակայն և սոցին իսկ յետնոցս բռնի սպառումն տայ գուշակել զՆշումն սակաւագիւտիցն ուսումնական մատենից: Այլ տակաւին մնացորդքն ինչ մնացորդաց, և լոկ իսկ անուանք՝ յայտ առնեն, զի չէին կոյր հայկական ախորժակք առ բանասիրականս և ուսումնականս. և անուանքն և մնացուածք երկասիրութեանց Դաւթեանց, Շիրակայնոց (Մնանիայ), Յակոբայ բժշկապետի 'ի Ե, Է և յ'Թ դարս, և յ'ԺԲ՝ Սարկաւազայ և երից Մխիթարեանց՝ Մնեցունց, Հերացւոյն և Գոշի, և 'ի յաջորդին՝ առ Ռուբինեանք՝ Վարդանայ և Սմբատայ, և նմանեացն, ոչ միայն յասացելոցս հաստատութիւն կրթին, այլ և ընծայեն յոյս յայտնութեան դեռ անծանօթ և անակնկալ գրուածոց գիտնականաց, 'ի ծագաց և 'ի ծակոց ուստեք հանապազահին և մշտաբողբոջ աշխարհիս Հայոց:

Մի յայսպիսեայ աստի ցանկալի երկասիրութեանց համարեացի աներկբայապէս՝ ընծայեալս 'ի լոյս Գ.ԻՐ.Բ. ՎԱՍՏԱԿՈՅ, ոչ դեռ այժմ ինչ՝ այլ 'ի դարէ հետէ ծանուցեալ մեզ¹. որ զի և թարգմանութիւն է (այլ նորութեամբ և ճիստութեամբ բառից լեզուին ընդ ազգային մատենագրութիւնս իսկ դասելի):

¹ Բագրատ ամբ. յառաջ 'ի Բագրատիւկ օրագրի հրատարակեցան գլուխք ինչ 'ի գլոյց աստի, ընդ որս և 'ի մօտոյ յամբ 1874 առ զեկուլթիւնք, յորոց է ինչ զի երկրորդեմք և աստանօր:

արժան համարիմք յառաջ քան զԹարգմանութենէն՝ սուղ ինչ ծանօթս տալ զբուն հեղինակէն կամ հեղինակաց։ Քանզի հաւաքածոյ խմբագիր է մատենան ՚ի յօլովից գիտնոց բանից որք զերկրագործութենէ կամ զմշակութենէ գրեցին, և որ յառաջ իսկ քան զգալուստ Փրկչին մերոյ, (որպէս անուանեալն Զրադաշտ, և մեծ գիտնականն Վարրոն)¹, և է որ սուղ յետոյ, յառաջին չորսին դարս նորին Թուականի։ Ի համառօտ յաւարդութեան հայերէն Թարգմանութեանս (որ յօրինակին կարգեալ էր յաւարտ գրեցն), բացայայտ ծանուցանի ո՛ր և յորոց զգիրսն համառօտեաց, « Պօսիլոս Անադալիսոս, որ ՚ի քաղաքէն Պերուլթայ »²։ զոր սակաւ ինչ այլայլութեամբ վաղ ուրեմն յ'Թ դարու՝ բազմահմուտն Փոտ նշանակէր յիւրումն Բիւրամատենի, ընթերցեալ զՎիտրուսիոսի Մնատուայ Պերիթայւոյ Մշակական Խորատո, հանդերձ երիւք կամ չորիւք յիշեցելովքն ՚ի հայումն, յայլոց ևս վեցից հեղինակաց, որոց ոմանց յիշին անուանք և ՚ի կարգի գրոց հայ Թարգմանութեանս. իսկ ՚ի յոյն բնագրին որ այժմս գտանի՝ ՚ի յառաջաբանին և ՚ի խորագրի գլխոցն կամ դրանց՝ յիշին այլ ևս հեղինակք, ընդ բնաւ իբրեւ քսան. բայց անուն հաւաքողին ոչ նշանակի։ Վասն այսորիկ հմուտք Եւրոպեացիք որք զկիսով ԺԶ դարու նախ հրատարակեցին զգիրսն, և որք զհետ նոցին ճառեցին զայնմանէ, և որ հոսկ և ընտրելագոյն բնաւից տպագրեաց հանդերձ լատին Թարգմանութեամբ՝ Նիկողաս Նիկիաս (ի Լիբսիա, յամի 1781), յայլ և յայլ կարծիս եղեն. ոմանք՝ Կոստանդնուպոլսեցի կայսեր վերագրեցին երկաթրութիւն, այնու՝ զի շողմնարար հաւաքող գրոցս ՚ի շնորհուկս կայսեր՝ ասէ, ՚ի վերայ բազմապատիկ մեծագործութեանց և յաղթութեանցն յաւելեալ և զհաւաքումն մատենիս. այլ արդ ոչ որ ՚ի քաջախօհից այսմ հաւանի. իսկ կայսրն Կոստանդին՝ զոր և ոմանք հնագոյն ոմն կարծեցին, աներկբայ ստուգի Միրանաժինն գոլ, ըստ յունականին Պերիեռուսթեն ՚ի մերս, ՚ի Ժ դարու կացեալ. որ արդարեւ ուսումնասէր յոյժ գուրով է ինչ զի ինքնին գրեաց և է ինչ բազում զոր այլոց ետ գրել. ընդ որս դասի և այս մատենան. ապա և հաւաքօղն էր ոմն նմին ժամանակակից, զոր Նիկիաս հրատարակողն ծանօթարար և յօրովագոյնք ՚ի գիտնոց՝ ճանայէն Կաւալաւոս Բաւաւս Միկելանթոնի (Սքոլաստիկոս) մակաձայնեալ։ Բայց այլոց ևս ոմանց, ընդ որս և մեզ, ոչ թուի և այս. քանզի, ոչ միայն կանխաւ այլում ընծայեալ է գործն՝ յակնան յանուանէ, զոյգ հայումն՝ ՚ի Փոտայ, այլ զի ընթերցատէրս այս խորագէտ՝ դարու միով երիցագոյն էր քան զՄիրանաժինն Կոստանդին, ապա և գիրքն հաւաքածոյ երիցագոյն էր քան զկայսրն և զընծայող Աքոլաստիկոսն, կամ ո՛րք և իցէ յետին յերկրող և ժողովող գործոյն. և զի սորա ոչ մեծ ինչ փոփոխութիւն արարեալ է քան զոր Փոտն ընթերցոյր՝ յայտ անտի է, զի գրեալ է համաձայն բան առ բան ըստ իւրումն գրեցելոյ և տպագրելոյն գտանին յիշատակք և հատուածք գրոցն առ Պալլադիոսի լատին հեղինակի՝ անդատին ՚ի Ե դարէ։ Հարկ ուրեմն է և գրոցս հաւաքման լինել յառաջ քան զայս Թուական, այսինքն քան զՆ դար. նա զի և Կասսիանոս անուն բժիշկք և բուսաբանք յիշատակին յառաջին անգ դարս քան զհինգերորդն. այլ և ՚ի սմին իսկ մատենի (ի Ե գիրս, ՚ի Զ գլ.) յիշատակի Կասսիանոս, որ ասէ զինքն լինել ՚ի Մարատոնիմա գեղջէ (Բիւթանիոյ)². ապա ոչ է նա ժողովող գրոցս՝ այլ այլ որ, որ գուցէ գնահինոյ ժողովողին տրոհեալն յ'ԺԲ հատորս, որպէս Փոտ

¹ Են որք ոչ զլատինն, այլ զոյն ոմն Տիւրանիոս Վարրոն համարին զիշեալն ՚ի գիրս յայս, որոյ գրեալ էր զդարմանոյ գրատուոց, բայց գիտունք՝ զՄարկոս Տերենտիոս Վարրոն։

² Զոյն տեղի հայերէնիս իւր կոչէ և Զլրերենտինոս, վասն այնորիկ և ոմանք նոյն մի այր համարին զսա և զԿասսիանոս։

ասէ, և ԺԴ ըստ մերոյս, 'ի քսան գիրս բաժանեաց, յաւելլով ինչ ինչ և յարմարելով կլիմայի կայսերանիստ քաղաքին և նորին սահմանաց:

Ստոյգ ուրեմն և առաջին հաւաքող Գրոցս Վաստակոց է Աւատոյն Պերիքսացի, յորոյ անուն և հայրենեաց միաբանին Փոտ և Հայ թարգմանս, իսկ յաւելի առնուն՝ ոչ, և ոչ գիտեմ մ'ստոյգ կամ մերձ 'ի ստուգութիւն. զի Պոնիսու կոչումն Հայոյն՝ ոչ ուրեք լի: Իսկ Վինգանիոս կից Անատոլ անունն ըստ Փոտայ՝ ոչ կարի հաւանական. նախ զի Անատոլ անուն յաճախ առ Բիւզանդացի Յոյնս լի, իսկ Վինտանիոս լատինական է քան յունական. և երկրորդ զի 'ի յառաջաբանի անդ այժմեան բնագրին՝ որով 'ի Վինտանիոս յԱնատոլեայ, ընդ մէջ անկանելով անուան հարեւորինս. և զի դարձեալ առ հինն ծանօթապէս յիշատակի Անատոն Պերիթացի, այլ ոչ այլով ինչ յորջորջմամբ: Իսկ ուստի արդեօք սպրդեաց Պոնիսուք անուն 'ի հայունմ' ոչ ունիմ ասել, բայց միայն զի յաղաւաղութենէ իմեքէ յոյն բնագրին յեղոյ յարաբացի լեզու, յորմէ մերն փոխաբերեալ է: Իսկ ինքդ Անատոլ որ 'ի Պերիթեայ քաղաքէ Փիւնիկիոյ, (որով և Ասորի ըստ ծագման,) հռչակի զկիսով Գ դարու, իբրեւ հմուտ իրաւագէտ, քաղաքագէտ և բանասէր. որ և մեծարեալ 'ի կայսերաց 'ի Հռովմ և նախարար Լիւրիկիոյ կարգեալ, առաքեցաւ երբեմն յԱթէնս՝ (իբր յամի 345) պատուաւ արել 'ի կայսերական գահուց զգերահռչակն 'ի սոփեստէսս ժամանակին և պարագլուխ ճարտարասանից, զմերս Հոյկազն Պրոյերես, զօրապետութեան պատուով: Արդ այսմ Անատոլի՝ եթէ ինքնին իցէ հաւաքող և գրող և եթէ այլոյ ձեռամբ, իրաւունք են ընծայել զհեղինակութիւն մատենիս՝ քան այլում ումեք: Բայց բուն բանիցն և խրատուց հեղինակք՝ օտարք են և բազումք, որպէս վերագոյնդ ազդեցաք, ոչ միայն Յոյնք և Լատինք, այլ՝ եթէ արժանիցէ հաւատալ ամենայն գրելոցն, և Բակտրիացի կամ Պարսիկ ոք Զրադաշտ, և Յուբաս Նուսիրացուց արքայ յԱփրիկոյ. զորս զանց առնեմք մեք թուել աստանօր. քանզի սակաւք 'ի բազմայն յիշին 'ի մերում թարգմանութեան, և ուր յիշին՝ անդ 'ի ստորեւ դրանց կամ գլխոց տուեալ է մեր համառօտ ծանօթս, և զամենեցուն միանգամայն անուանս դասեալ յետ ցանկի գրոց՝ ընդ սակաւուց ոմանց աշխարհագրական անուանց: Ի բնագրին՝ ընդ իւրաքանչիւր խորագրաւ գլխոց նշանակեալ են անուանք հեղինակացն. զոր մարթ էր և մեզ յաւելլու 'ի զօսմանս և 'ի հմտութիւն մերայոցս, եթէ հաւասար զուգընթաց թարգմանութիւն էր յունին: Արժան է յիշեցուցանել միայն աստ 'ի կարգի անուանցդ՝ զյիշատակեալն 'ի մերոյս 'ի վերջոյ ամենեցուն՝ զԲլուտրեայի Նիկոլոյիս, որ ոչ բնաւ յիշի 'ի բնագրին, և ոչ այլ անուն նմին նմանաձայն. հմտագունից այսմ գիտութեան և գրագրութեան՝ թողումք հաւաստել զայս. իսկ մեք փաստ մի և աստի առնումք զսկզնագիր օրինակ մերոյս թարգմանութեան՝ որիչ և երիցագոյն համարել քան զընծայեալն յարդեաց՝ Կասսիանոսի Բասոսի և զհրատարակեալ 'ի Նիկլասայ, թէպէտ և զոցայս կոչիցեմք մեք Բնագիր՝ աստ և 'ի ծանօթութիւնս:

Էւ սա արդ, որպէս և վերագոյն ասացաք, 'ի քսան գիրս բաժանեալ է, և իւրաքանչիւր գիրք 'ի գլուխս աւելի կամ պակաս թուով. որք ոչով իմն ճառեն և կարգաւ մի ըստ միովէ զՎաստակոց երկրի և զմիակեւեացն այդեաց և տնկոց, և զանասոց. իսկ մերս՝ թէպէտ և գրեալթէ զնոյն կարգ ունի, բայց ոչ է տրուհեալ 'ի Գիրս, որով մարթ էր որոշակի ընտրել և նիւթոց ճառելեայն, այլ 'ի գրութեան աւելի քան զ300, կամ 'ի դրունս՝ որպէս գրեալ էր յընտրելագոյն օրինակին՝ որում հետեցանք Պակասէն 'ի մերումս երկուց վերջին գրոց բնագրին խրատք՝ որ զերեւոյ, և զձկանց և զեւանոց, որպէս և զհաւուց՝ որ 'ի ԺԴ գիրս բնագրին, այլ և զԺԱՊԿԱՆԵՆ և զպարծիգի ծառոց՝ որ 'ի ԺԱ գիրս, զորոց

ըղձալի էր մեզ ունեւ թարգմանութիւն, ոչ այնքան վասն բանիցն ճառելեաց, որքան վասն բառից և լեզուին: Չանց արարեալ է մերս և գրեալ զողջոյն Ա. գրովք, որ զօգոց ճառէ և զօգերեւութից, և զլուսաւորաց և զյեղանակաց տարւոյ, որք արդարեւ չեն այնքան կարեւորք և ոչ ամենայն կլիմայից պատշաճք. և զայս յայտ առնէ մերս 'ի սկզբան բանիցն: Աստուսարտ արժան համարեցաք զառաջակայիցն զերկարաբանութեանցն զանց առնել: Բայց և այսպիսի անյարիր սկիզբն բանից՝ Աստուս, կարծիս տայ՝ կամ նախ այլ յառաջաբանի լինել 'ի Հին օրինակս թարգմանութեան մերոյ, կամ ողջոյն իսկ գրոցն թարգմանութեան, զորովք յետին ընդօրինակօղք զանց արարեալ են: Այլ և 'ի բանս կամ 'ի խրատս գլխոցն՝ դուռ ուրեք համակարգ և բառական է թարգմանութիւնն, այլ յաճախ յետ և յառաջ, աւելի կամ պակաս. և որպէս զբազում իւրք զանց արարեալ է, ունեւ ունի հայերէնն և առաւելութիւնս որ ոչ գտնուին 'ի յոյն բնագրին. որ և 'ի միում նուագի 'ի Մխթ Դրան՝ ասէ գրեալ և այլուր զգայտ կորելւ յ'Գ. Գլոխս. 'ի բնագրին ոչ գտանեմք առանձինն գրեալ զայսմանէ, այլ ըստ իւրաքանչիւր ամսոց ինչ ինչ հակիրճ յ'Գ. Գլոխս: Իովանդակ մատեան հայ թարգմանութեանս՝ իբրեւ չորիւր լոկով մասամբ չափ նուազ է քան զլուսնականս. թերեւ ոչ շատ ինչ աւելի ունեւ և օրինակն՝ յորմէ փոխեցան 'ի մեր լեզուս:

Օրինակն այն՝ առանց երկբայութեան էր արաբերէն թարգմանութիւն յունականին, որպէս քաջայայտ երեւ յարաբիկ անուանց համաստեղութեանց, զոր մերթ թարգմանելով և մերթ ոչ՝ կրկնէ մերս, և 'ի բուսոց և կենդանեաց ուսանց՝ զորոց չէ գտեալ բնիկ հայեցի կոչմունս. ընդ որոց հարկ էր նմա զլուսնականս կարգել անուանս՝ եթէ 'ի յունէ անտի թարգմանէր. իսկ եթէ յիշէ ուրեք այսպէս կամ այնպէս կոչիլ յունարէն՝ անդ Արաբացի թարգմանին է բանն զոր կրկնէ Հայն: Այլ է մեզ ծանօթ փափագելին այն արաբացի թարգմանութիւն, յորմէ մարթ էր անկասկած ստուգել զամենայն բառս հայկականիս. այլ զի գիտեմք զառաջին եռանդն ուսման և մակացութեանց նուազել յԱրաբացիս յառուս Կոստանդին, 'ի դէպ թուի յառաջ քան զնորա՝ ժամանակս (քան զկէս Ժ դարու) համարել զնոցայն թարգմանութիւն. որում երաշխաւոր համարիմ և զասորի Հին թարգմանութիւն գրոցս, որոյ գտաւ օրինակ գրեալ յ'Թ դարու¹. և այս ևս յաւելու փաստս զբնագիր գրոցս յառաջեցունք քան զայսմու յոյն բնագիրն, և հաստատել հարազատագոյն գործ Անատոլեայ², ի թարգմանել Հայոյն առնթերակայ թուի և Արաբացի լեզուագէտ, կամ երկոցուն միաբան թարգմանեալ. քանզի ասէ ուրեմն (ՄկԿ) վասն խոտոյ իրիք, « Արապիւրէն ասեն Պատուաճ, և մեք չկարացաք ճշմարտել 'ի թարգմանէն. և որք ճշմարտենն՝ թող գրեն »: Այսպէս և այլ սակաւ ուրեք ոչ կարելով ճշմարտել գրէ զարաբացի անունն և դատարկ թողու 'ի տողին վասն գրելոյ զհայն 'ի ստուգելս:

Առաւել ևս ըղձալի էր մեզ գիտել զստոյգ տեղի և ժամանակ և զանձն հայերէն թարգմանին, զոր զլանան մեզ երեքին ևս օրինակք գործոյս՝ որք 'ի ձե-

1 Չոր և հրատարակեաց Պօլ Լակարտ (Boetticher) 'ի Լիւթա, յամի 1855. այլ մեր չէ տեսեալ զայն:

2 Միւլլէ (Clément Mullet) որ յամի 1864-7 հրատարակեաց զգիրս երկրագործութեան իւրաքանչիւր Արաբացոյ, յիշէ և զայլ արաբացի ձեռագիր իբրեւ բուն համառոտութիւն յունական Վաստակոց Գրոց, և Իրմոնկիտեայ ընծայեալ. և զի 'ի մերում թարգմանութեանս իսկ յայսմիկ Իրմոնկիտեայ յաճախագոյն քան զայլ հեղինակս յիշէ՝ կարծեմ թէ հայերէնս այս թարգմանութիւն է այնր արաբացի մատենի, զոր ոչ ժամանեցաք ստուգել:

ռին մերում, նորագիրք և անյիշատակք: Համարիմք յաւուրս տիրապետութեան Ռուբինեանց երկասիրեալ, և 'ի Կիլիկիայ, քանզի թէպէտ և ուրեք ուրեք յառաջին հեղինակէ գրոցս յիշեալ լինի աշխարհն Կիլիկեցոց (որպէս 'ի ՄՀԳ. ՄՀԳ. ՄՀԳ. ՄՀԳ. զրուսն, ուր հեղինակ բանին է Յորրենտիոս), այլ յիշի 'ի մերում թարգմանութեան և ուր չիք 'ի յոյն բնագրին, և ոչ իսկ թուի պատշաճել. զոր օրինակ 'ի գուռն ԶԶ, հեղինակն որ է ինքն Սնատով յիշէ զԱրեւելայս և զԼիբեացիս. մերս (զյետինդ 'ի Նիսուէացիս փոխեալ) յաւուրս, « Նոյնպէս և Կիլիկիեցիքն առնեն » և 'ի գուռն ՂԶ, 'ի ճառեւն զհասնգարեւոյ այգեաց և անդոց յօդոց փաստէ, ուր և ոչ մի այլ աշխարհ կամ քաղաք յիշի, մոծանէ մերս, « ևս առաւել 'ի Կիլիկիոյ գաւառս »: Իսկ ժամանակ թարգմանութեան կարծեմ զԹԳ դար, վաղագոյն քան թէ անագան¹. զի ոչ միայն ամբոխք յետին դարու իշխանութեան Կիլիկեցոց մերոց՝ ոչ յուսացուցանեն այսպիսի մտադիր պարապմունս գիտնականս, այլ և ոչ այս քան յստակութիւն և գիտութիւն լեզուի ակն ունելի է 'ի ժամանակաց՝ յորս գրեալ է լէ և գաղարէ իսկաբանութիւն հայերէն խօսից և զպրութեանց: Քանզի թէպէտ և յաշխարհիկ բարբառ և յոճ յեղեալ են գիրքս այս, այլ չեն ինչ նուազեալ 'ի շնորհաց յստակութեան և սեփականութեան հայերէնի լեզուի, հանդերձ գիւտով և գիտութեամբ արուեստական կամ բնախօսական բառից, որով դուն ուրեք կարօտի օտարաձայն եկամունտ անուանէ. և այս ոչ միայն զթարգմանչիս մերոյ հմտութիւն և զհետաքննութիւն ցուցանէ, այլ և զճոխութիւն և զընդարձակութիւն լեզուիս և զկանուխ ծանօթութիւն բնական և արուեստական գիտելեաց 'ի Հայս. ընդ որ արժան իսկ է մեզ խնդալ և պարծել. և եթէ ճանաչեալ զթարգմանին՝ բազում երախտեաց դրուատիս և նմա մատուցանել: Ընթերցող բանասէր և բնասէր ինքնին վկայեցէ այսմ՝ հանդիպելով 'ի սմա հարիւրաւորաց պիտանի և ընտիր ընտիր բառից՝ որոց մեծ մասն մի չե ևս է մտեալ յեջս տպագիր բաւարանաց մերոց. և սակա այսորիկ իսկ հարկ էր յովովից յայնցանէ անհասկանալիս կամ երկբայելիս մնալ: Այսմ պէտ արարեալ դիւրութեան՝ յանցելում դարու՝ ծանօթ բանասէրն և հմուտ հայերէն և տաճիկ լեզուաց (թուրք, պարսիկ և արաբացի), Գեղարդ Պաշտաւցի, արարեալ էր ըստ իւրում կարի՝ քաղուած և մեկնութիւն բառիցն, նշանակելով և զթուրք և ուրեք զարաբացի կամ զպարսիկ յորձորմունս նոցին. և զումանս ոչ կարացեալ ստուգել թողեալ էր դատարկ զկարգն, և յումանս՝ վերիպեալ և այլ ազգ մեկնեալ: Զոր և մեր ըստ մերում կարի ջանացեալ՝ աճեցուցաք, ուղղութեամբք և յաւելուածովք. և ուրեք՝ ոչ ունելով այլուտ երաշխաւորութիւն 'ի նա ինքն ապաստան թողաք զմեկնութիւնն, նշանակելով անդ զանուն նորին. և յերկբայս՝ զերկբայութիւն մեր յայտ արարաք թուրք և կարծեօք. որպէս և զայն սակաւ՝ զոր գլխովին ոչ կարացաք ստուգել, ոչ 'ի բնագրէն գտեալ օճան և ոչ յայլ գրոց՝ թողաք 'ի բաց: Աղաչի ընթերցողն ներողաբար երկայնամտութեամբ հայել 'ի ծանօթութիւնն որ 'ի ստորե իջլցն, և 'ի Բաւա՝ որ զկնի գրոցս կարգեալ կան. և որ ստուգագոյնս գտցէ և մեզ ծանուցէ, ընդունիմք շնորհակալու մտօք:

Սուղ ինչ և զօրինակաց գրոցս ծանուցանել 'ի դէպ համարիմք. որպէս վերագոյնդ նշանակեցաք՝ երիս և եթ ունիմք՝ նորագիրս և նօտրագիրս, յետ կիսոյ

¹ Եւրո ինչ արուեստական գիրս՝ յիշատակի Հեթմոյ Ա. 'ի սկզբան թագաւորութեանն երթալ և պատուել 'ի Գրան Աֆրապետին, և անդ 'ի ինդրոյ բանասիրի ուրումն տալ թարգմանել երիս գիրս, զՊաշտաւան ձիոյ, Գուր չինելոյ, և զԱրեգական և Լուսնի օրինաց: Զիցէ արդեօք և այս Գիրք Վարդապետ 'ի ճահ նոցին, և եռանդուն թագաւորին հաճութեան:

անցելոյ դարուն գրեալս, և Երեքին ևս թուի թէ 'ի Կոստանդինուպօլիս, ուր յուսալի էր տակաւին գտանել զսկզբնագիր գաղափարն՝ եթէ հրգեհաց ճարակմունք չանկանէին 'ի միտս. այլ տակաւին խրախուսեմք հրաւեր կարդալ 'ի խողք և 'ի խնդիր. և թէ ոչ անդ 'ի մեծի քաղաքին 'ի բնիկ աշխարհի մեքում: Գուցէ ընտրեալոյն և լրագոյն ևս գտցին օրինակք. քանզի 'ի մերսս Կոնստանդնուք քաղաքս, որպէս և տպագիրս ցուցցէ: Երկուք յօրինակաց մեքոց յոյժ նմանաբանք են և 'ի միոյ աղբերէ յառաջագայեալ. իսկ երրորդն՝ ուրում հետեւեցաք՝ ոչ սակաւ զանազանի 'ի նոցունց, և վերագոյն է լեզուաւ և ստոյգ գրուածեմք. յայտ է թէ գաղափարող միառոցն առաւել ևս պարզել կամելով զերբեմն ժամանակի աշխարհաբանն՝ ռամկացուցեալ ևս է ըստ ոճոյ կամ հասկացման իւրոյ ժամանակին. յորմէ մարթ է կարծել, թէ գուցէ բուն առաջին թարգմանութիւնն առաւել ևս քան զհրատարակեալս այս՝ հայախօս կամ քրաբառ էր, ըստ որում է սկզբնաւորութիւն գրոցս: Ոչ միայն զլեզուն պարզաբանել նկրտեալ է յերկոսին յայն օրինակս, այլ և ուր պակասորդ ինչ տեսեալ է յառաջնագիր օրինակի իւրեանց՝ 'ի բաց թողեալ է զբառս ինչ, և կարկատեալ զմաստն, հետախաղաղ առնելով զպարսապն և զիւրթին ինչ աւսացուածս: Այն օրինակք յ'333 զյուսիս կարգեալ ունին զբանս գրոցս, իսկ միւսս այս ընտրեալս՝ յ'298. բայց զի ուրեք մոռացեալ էր զգլխահամարն, և ուրեք ընդ միով համարով արկեալ էր զբազում զանազանեալն, և կամ առանց համարոյ՝ զխորագիրս գլխոյն կարգեալ, մեք զատուցեալ զայնոսիկ, որպէս արժանն պահանջեր, նշանակեցաք 332 Դրռունս. զի այսպէս վերակոչէ սոս զհաստածան՝ և ոչ Գլռունս:

Այն մի հարեանցի արկեալ և 'ի բուն և յիսկն գրոցս, և նախ յանունն, գտանեմք թէ ոչ համաձայն՝ այլ համամիտ բնագրին՝ ըստ ոճոյ և զօրութեան աշխարհօրէն լեզուիս՝ ՎԱՍՏԱԿՈՑ ԳԻՐԻ ԿՈՅԻԼ. զի այսպէս լի և ասի առ ռամիկս՝ որ Մշակական կամ Երկրագործականն կոչի ըստ գրաւոր լեզուիս 'ի նախնեաց. և նոյն է յունական անուն ΓΕΩΠΟΝΙΚΑ, զոր և լատինաց առեալ է 'ի կիր, Geoponicon, և Փռանկաց՝ որք վաղ ուրեմն կանխեցին յեղուլ զայն յիւրեանց խօսս և տպագրել անդասին յամէ իբր 1547, կոչելով Géoponiques. Բայց մի յօրինակաց մերոց՝ որ ընդօրինակեալ է յանուանեալն Միջագիւղի Կ'Պօլի, ՊԱՐՏԻՋՊԱՆԻ ԳԻՐԻ անուանէ զսա՝ 'ի համառօտ ինչ յիշատակարանին:

Իսկ վասն իմաստից և վարդապետութեան գրոցս՝ շատ լիցի ասել, զի թէպէտ և յոյժ զարգացեալ է այժմ նախերեց արուեստս այս երկրագործութեան, տակաւին ոչ միայն իբրև զուարճալի և զբօսալի՝ այլ ուրեք ուրեք և պիտանի և շահաւետ են որ 'ի սմա խրատք. քանզի և քաջաց գիտնոց և հմտից արանց փորձ և աւանդութիւնք են. Գուցէ և նոր և զեղեցիկ ինչ թելադրութիւնք և հնարք գտանիցին, յօժարութեամբ և օգտիւ ընդունելք: Այլ հարկ է յիշել և զայն, զի հեղինակք բանիցս գրեալթէ ամենեքին հեծանապք և գրեալթէ յանհնարիցն էր չխառնել 'ի նոսին բանս սնտի կարծեաց և ռամկական աւանդութեանց՝, որպիսիք և արդ իսկ առ ռամկին գտանին, նաև առ

1 Յայս սակս իբրև 'ի սկիզբն դարուս կամք եղեն Երկրագործական ընկերութեան Բարիդուտալ վերադին թարգմանել զգիրս զայս 'ի փոանկ լեզու, ոմն 'ի բանափրաց նոցին անօգուտ վարկուցեալ զտրորն, քաղուածով համառօտեաց, և կոչեաց Abrégé des Géoponiques, որ և տպագրեալ է յ'ՓԻ հատոր Մշակական Յիշատակարանաց հասարակելոց յայնմ ընկերութենէ. Mémoires d'Agriculture, publiés par la Société d'Agriculture du Département de la Seine, Tome XIII, 1810.

վայելողն իսկ ոչ լիկ յընդհանուր լոյս գիտութեանց՝ այլ և ամենալոյս և սուրբ կրօնից, զորօրինակ է տեսանել զայդպիսիս 'ի դրունս ԻՒ. ՃԼԸ. ՄԽԸ. ՄԿԴ. ՄՀԳ. ՄՂ. ՄՂԳ., և այլն: Առաւել քան զայդոսիկ գտանէին ուրեք և իսպառ անպատեհ խտիրք և հնարք, զորս պատշաճ համարեցաք թողուլ 'ի բաց, կիտադրութեամբ միայն նշանակեալ զտեղին: Բայց յիշատակ և կոչումն դից կամ այլ ինչ հեթեթանք հեթանոսական հաւատոց և պաշտամանց՝ բնաւ չերևին և յայժմեան բնագրին, յորմէ գուշակի ընդ քրիստոնեայ ձեռս անցեալ և մաքրեալ: Ազգ առնէ և Փոտ թէ գտանէին և յօրինակին զոր ինքն ընթեռնոյր՝ անհաւատալիք և սուտ սքանչելք, յորոց զգուշանալ թեղադրէ, և յերկբայականս՝ հետեւել լեւոնի կամ լէոնդինու, որ թուի կոչեցեալն լաղկիկոս 'ի մերոյս (եթէ չիցէ սա վարդոն), արաբացի աղաւաղանօք անուանն. և ոչ է յայտ ո՛ր յորում կացեալ դարու, թէպէտ և ոմանց թուեցաւ առ Յուստինիանոսիւ կայսերաւ 'ի Զ դարու:

Իսկ մեք զկարօտ լուման մատենին և զպայտութեան թարգմանչին, համարեցուք ընուլ այժմիկ՝ ոչ փորը մասամբ, եթէ ընդունելութեամբ և իւրք իւրք կիրառութեամբ մերազնեից՝ պատուեացին այս Գիրք վաւարակոց, հանդերձ և հրատարակողացն դոյզն ինչ վաստակօք:

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶՔ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԹԱՆԱՄՆԻՅ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆՆ. ԵՒ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆԻՆ

Զկայ յաշխարհիս գիրք մը որ այնչափ գրուածոց պատճառ. եղած ըլլայ, ինչպէս Աստուածաշունչ գիրքն, թէ կրօնական, թէ լեզուաբանական, թէ ուսումնական և թէ մատենագրական տեսութեամբք. և ցայսօր իսկ չի դադարիր ներկայ քննադատական արուեստն երբեմն երբեմն խայթել ուղղափառ. և ողջամիտ արանք կարծիքը՝ սոյն Գրոցս այս կամ միւս մասին վրայ: Բայց մեր նպատակն չըլլալով կարծեաց տեսութիւնքն, կ'ուզենք աւելի այդպիսի հրաշալի գրոց վրայ աշխատող մատենագրաց անուանքը ծանօթացնել մերայոց. և մեր հրաշալի թարգմանութեան վրայ քանի մը մանր ծանօթութիւններ նշանակել. ջանալով միանգամայն որ շատ անգամ խօսուած և ըսուած բա-

ներն չկրկնենք 'ի ձանձրութիւն բանասէր անձանց:

Զկայ թերևս ոչ ազգ մը և ոչ լեզու, որ այսօր չունենայ այդ գրոց թարգմանութիւնք. բայց հնասէր անձանց քաղցրագոյն է միշտ հնութեան սրբական քողոյն պատկառ կենալ, և չմամիլ եւրիլական Յովին՝ որ ծածկեալ գանձ մը յայտնելով՝ կամ վարդ քողը վերջնելով՝ աշխարհիս վրայ մահը պատճառեց. շատ անգամ այսպիսի մանր կարծուած պատրուակ մը կրնայ մահառիթ ըլլալ հետաքննողին: Ուղղափառք և ոչ նոյնպիսիք շատ աշխատած են այսպիսի ազնուական գրոց վրայ, բայց շատ անգամ քննադատից վճիռքն կախ մնացած ժամանակ իսկ՝ ռամկին կամ հասարակաց միաբեր աւելի յան-